

ԱՆՔՆԵՐ




“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ԵՂՈՅԸ ՈՐ ԻՆՈՒ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԷ.

ԿՈՍՏԱՆՆՅՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1888

ԹԻՒ 6



ԼԻՍՊՈՆԱՅԻ ԵՐԿՐԱՆԱՐԺԸ

Բորթուկալի մայրաքաղաքին, Լիսպոնայի, վրայ կը պատմուի թէ երբ մարդ գետին կողմէն կը նայի անոր պալատներուն, եկեղեցիներուն և ճեմակ տուններուն որ իրարմէ վեր կը բարձրանան բլրոց վրայ, ուր շինուած է քաղաքը, կը ներկայանայ աչքին պերճ և շքեղ երևոյթ մը որմէ գերազանց՝ աշխարհի քիչ քաղաքներուն մէջ կը գտնուին: Լիսպոնայի նաւահանգիստը շատ ընդարձակ է և

ԼԻՍՊՈՆԱՅԻ ԵՐԿՐԱՆԱՐԺԸ

շատ ապահով, և մեծ նաւատորմի մը կրնայ հոն պարունակուիլ և խարխիս նետել: Ուրեմն Լիսպոնա է ճիշդ այն պիտի քաղաք զոր թաղաւոր մը բնականապէս պիտի ուզէր իրեն մայրաքաղաք ընտրել:

Բայց այս գեղեցիկ քաղաքին վրայ պատմուած ամենէն երեւելի իրողութիւնն է սոսկալի աղէտ մը: Յամին 1733, Նոյեմբեր 1ին, զոր Լիսպոնացիք կը

կոչեն «Նոյեմբերի սև առաջին օրը», սոսկալի երկրաշարժի ցնցիւն մը աւերակաց կոյտ ըրաւ քաղաքին մէկ մեծ մասը: Բնակչաց ուրիշ նշան մը չձանուց մտալուտ արկածը, բայց միայն շառաւան ձայն մը որուն անմիջապէս յաջորդեց քաղաքը կործանող ցնցիւնը: Իրենց բնակարաններէն փախուցնելէն շատերը վաղեցին գետեզրը, և ապշեցան մնացին տեսնելով որ գետին ջուրը գրեթէ ցամքած էր: Բայց ջուրը կրկին տեղը դարձաւ շուտով,

և 50 ոտք բարձրութեամբ անագին կոհակ մը աւելց տարաւ 40,000 է մինչև 60,000 անձեր, և կ'ըսուի թէ անոնց մարմիններն այնչափ խոր ընկղմեցան որ հաստ մը անգամ չը տնուեցաւ դարձեալ: Քաղաքին մէկ մասը ընկղմեցաւ, և այն տեղ ուր առաւօտուն տուներ կը կանգնէին, երեկոյին 600 ոսնաչափ խոր ջրով ծածկուած էր: Երկրաշարժին ցնցիւնը զգալի եղաւ շատ ուրիշ տեղեր ալ, բայց ուրիշ տեղոյ մը մէջ այսպիսի սոսկալի աղէտ չբերաւ:

Երբ Աստուծոյ զօրութիւնն այսպէս կ'արտայայտուի ինչպէս բոլորովին անզօր է մարդ: Կրնայ մաքառիլ նա թշնամի մարդոց, վայրի դաղանաց, և կերպով մը հիւանդութեան անգամ դէմ, բայց ինչպէս կրնայ դէմ դնել երկրաշարժին որ նոյն իսկ գետինը իւր ոտից ներքև մէկ մէջ անյայտ կ'ընէ:

ՍԿԻՉՔ ԵՒ ՎԱՍՏԱՆ

ՍԿԻՉՔ

Տասը տարեկան դպրոցի աղայ մը, Յունիս ամսոյ սիրուն օր մը մինչ վարդերը աղուոր բացուած էին տան դաւիթին մէջ և երկրազորք դաշտն էին, զրկուած էր իւր հօրեղբորմէն երթալ և ներկայացունելով փոխանակագիր մը (տուրք) վճարել վաճառատան պարտքը: Փոխանակագրէն 12 դոհեկան աւելնալով՝ վաճառատունէն յանձնուեցաւ աղին: Եւ հօրեղբայրը այնուհետև չըբաւ այն ստակին խօսքը: Այս աղան մինչ կէս օրին կը կենար գեղեցիկ երկինքի մը տակը, անոր վրայ յարձակեցաւ մեծ փորձութիւն մը: Բաւ ինքնիրեն, «Տամ այս ստակը հօրեղբորս թէ սպասեմ մինչև որ հարցնէ ինձ անոր վրայ: Եթէ բնաւ չհարցնէ, յանցանքը իրն է, եթէ հարցնէ՝ դարձեալ կրնամ տալ անոր:» Այսպէս ստակը բնաւ չդարձուց իւր հօրեղբոր:

ՎԱՍՏԱՆԸ

Ասոր վրայ անցան տասը տարիներ, նա դրագիր էր դրամատան մը մէջ: Փոխանակագրոց տրցակ մը կը կենար գորոցի մը մէջ որ չէր կղպուած: Տեսաւ զանոնք, փաթթեց իւր վերարկուին մէջ և տարաւ տուն: Հիմա բանտն է, բայց այդ ճամբուն մէջ դրաւ իւր ոտքերը երբ աղայ էր տարիներ առաջ, երբ ծախեց իւր ուղղութիւնը 15 դոհեկանի համար: Այդ գիշերը կը նստէր խայտառակուած և իբրև յայտնի ոճրագործ մը: Հօրեղբայրը շատ ժամանակէ հետէ մեռած


էր: Անոնց այն հին տունը ամայացած էր, մօրը սիրտը վշտաբեկ էր: Բանտարկեալը զիտէր թէ ինչ բան բերած էր զինք հոն:

ՎԵՆԵՏԻԿ

Վենետիկ որ կ'անուանի «Սրբիականին հարսը», աշխարհիս ամենէն

նման քաղաքի, և ըսել կ'ուշադրեն աէրոլ տանել ուր որ կը կամի:

Վենետիկ քաղաքը հիմնուեցաւ Ե. դարուն, երբ Ատտիլաս, Բարբարոսաց պետը, կ'աւերէր մերձակայ գաւառները և կը սպաննէր բնակիչներէն շատերը: Անոր ձեռքէն ազատուելու համար բնակիչք փախան այս կղզի-



ՉՈՒՐ ԱՐՁԱՆՆԵՐ Ի ՎԵՆԵՏԻԿ



ԲՆԱԼՈՑ ԿԱՄՈՒՐՁԸ

հետաքրքրական քաղաքներէն մին է: Նինուած է փոքր կղզիներու վրայ, և թէպէտ ունի շատ մը նեղ փողոցներ, անոր գլխաւոր փողոցներն են ջրանցներ, որոցմէ իբր 150 հաս կը զըսնուին քաղաքին մէջ: Եթէ մարդ ուղէ անցնիլ քաղաքին մէկ մասէն միւսը, միայն պարտի կանչել իւր դրան առջև կ'ուշադրեն մը, որ նաւակ է քիչմը

ները ուր կրնային դիւրաւ պաշտպանուիլ:

Առաջին խաչակրաց ժամանակը, ժՄ. դարուն վերջին մասին մէջ, Վենետիկ սկսաւ նշաններ ցուցնել իւր ապագայ մեծութեան, և անկէ չորս դար ետքը աշխարհիս ամենէն զօրաւոր և ամենէն հարուստ քաղաքն էր: Երկարատև պատերազմներ տեղի ունեցան

վենետիկոյ և ճենովայի մէջտեղ որ ի-
րարու նախանձորդ էին Արեւելքի վա-
ճառականութեան համար :

Վենետիկոյ գեղեցիկ շէնքերուն կար-
գէն է Սբ. Մարկոսի մայր եկեղեցին :
Աւանդութեամբ կ'ըսուի թէ Սբ. Մար-
կոսի ոսկորները Աղեքսանդրիայէ վե-
նետիկ փոխադրուեցան յամի Տեառն
829, և նա այնուհետեւ համարուեցաւ
քաղաքին պաշտպան սուրբը : Մայր ե-
կեղեցոյ ներսի կողմը շատ շքեղ է,
և անոր մուտքին վրայ կը կանգնին
պղնձէ չորս ձիեր որ կը ներկայացուն
պատկերին մէջ : Մեծն կոստանդիանոս
այս ձիերը բերաւ Հռոմէ կոստանդ-
նուպոլիս, և 1204 ին կոստանդնու-
պոլիս տարուեցան վենետիկ ձեռամբ
վենետիկցի յաղթականաց :

Միւս պատկերը կը ներկայացունէ
Ռիալթոյի կամուրջը մեծ ջրանցին
վրայ : Մարմարիտն կամար է այն, և
երկու կարգ խանութներ շինուած են
անոր վրայ խանութներուն մէջտեղը
և երկու կողմերը երեք նեղ ճամբանե-
րով : Երեսուցաւ ճիշդ երեք հարիւր
տարի առաջ :


Ա. Ղ. ՕՔԵՆ, ԿԷՍ ՍԵՆԵԿԻ ՄԷՋ

Պոսթընի մօտ մեծ և պատուաւոր
գպրոցի մը մէջ տարբեր նահանգներէ
երկու տղայք որ օտարական էին ի-
րարու, պարագայից բերմամբ մի և նոյն
սենեկի մէջ դրուեցան : Գպրոցական
չրջանին սկիզբն էր, և այս երկու աղ-
ջայք անցուցին առաջին օրը՝ կար-
գադրելով իրենց սենեակը և ծանօ-
թանալով իրարու հետ : Երբ գիշերն
հասաւ, այս տղոց փոքրը ըսաւ միւ-
սին, թէ չէր խորհեր որ աղէկ կ'ըլ-
լար եթէ օրուան այն վերջին ժամուն
Աստուածաշնչէն կարգային քիչ մը և
աղօթք ընէին : Բայց միւս տղան բիրտ
կերպով մերժեց առաջարկութիւնը :
«Մերեմն պիտի չառարկես, կը յու-
սամ, եթէ ես առանձին աղօթք ը-
նեմ», ըսաւ փոքրը : «Ես այսպէս սո-
վորած եմ, և կ'ուզեմ շարունակել» :
«Ես պէտք չունիմ որ և իցէ աղօթքի
այս սենեկին մէջ, և չեմ ուզեր ա-
ղօթք», պատասխանեց ընկերը :

Փոքրը ելաւ կամայով մը, գնաց
սենեկին կեղբորն, և կանդնելով կա-
պերտին կարանին վրայ որ սենեակը
գրեթէ հաւասար երկու մասանց կը
բաժնէր, ըսաւ հանդարտութեամբ :
«Այս սենեկին կէսն իմ է : Ես կը
վճարեմ անոր վարձքը : Գուն որոշէ
թէ ո՞ր կէտը կ'ուզես քեզի համար :
Եւ ես միւս կէտը կ'առնուծ, և կ'աղօ-
թեմ այն կիսուն վրայ, եթէ ոչ՝ կ'եր-
թամ ուրիշ սենեակ մը : Բայց աղօթքի
պարտիմ և պիտի աղօթեմ, գուն թէ՛
հաւանիս թէ՛ մերժես» :

Մեծը իսկոյն յաղթուեցաւ : Մինչև
այսօր կը գիտայի նա այն հաստատա-
միտ անկիւս բնութեան վրայ որ պա-
հանջեց իբրև երաւունք ինչ որ ինք
կապտութեամբ մերժեց տալ անոր իբ-
րև արտօնութիւն : Գրիստոնեայ մը և
թէ աղօթք ընելու թոյլտուութիւն կը

խնդրէ, թոյլտուութիւն կրնայ խնդ-
րել նաև շունչ առնու : Չիլու՞մ ը-
նելու սխալ հակամիտութիւն մը կայ
Գրիստոնէից գործոց հետ կապակցեալ
որ կարգելէ զանոնք համարձակ կեր-
պով կատարել իրենց պարտականու-
թիւնները : Եթէ կայ զմայելի բան
մը, այն է արութիւնը որ կը ճանչնայ
իրաւունքը և կը համարձակի ի գործ
դնել զայն առանց թոյլտուութիւն
խնդրելու :



ՉԱՏԿԻ ԿՂՁԻ

Խաղաղական Ովկիանոսին մէջ Հա-
րաւային Սմերիկայի ծովեղբքէն իբր
2,300 մղոն հեռի դէպ արևմուտք կայ
փոքր կղզի մը Չատկի կղզի անունով,
վասն զի առաջին անգամ տեսնուե-
ցաւ Չատկի սօնին օրը : Ունի միայն
իբր 200 բնակիչ, բայց քիչ տարիներ



ՉԱՏԿԻ ԿՂՁԻ

առաջ այժմու բնակչաց երեք ան-
գամն ունէր : Միւսները դողուեցան
փերուցի նաւավարներէն և ծախուե-
ցան իբրև գերի : Կղզւոյն մէջ կը գրա-
նուին երեք հատ մարած հրաբուխ-
ներ, բայց կղզին դիտարարպէս ար-
ժանի է ուշադրութեան՝ քարէ մեծ
արձաններուն համար որոց քանի մը
հատը կը ցուցուն մեր պատկերին մէջ :
Այժմու բնակիչք չունին գործիքներ
որովք կարող ըլլան շինել այնպիսի
արձաններ, ոչ ալ ունին որ և իցէ մե-
քենաներ որովք կարող ըլլան շարժել
կամ տեղափոխել այսպիսի ծանր բա-
նէր : Արդեօք որո՞նք գործ են անոնք :
Թերևս անհետացած ժողովուրդեան մը
որ շատ մը աւելի մտացի էին քան
կղզւոյն արդի բնակիչները : Այս վեր-
ջինք այլ և այլ յիմարական աւանդու-
թիւններ կը պատմեն անոնց վրայ,
բայց արձանները երկար ժամանակէ
հետէ դադրած են պաշտելի առար-
կաներ ըլլալէ :

ԻՐԻ ՇԱՀԸ ԶՓՆՏՈՒՈՂ ՏՂԱՆ

Արեւ մարը մտած էր, և գիշերը
կը սփռէր իւր վերարկուն բլրին գա-
գաթին, և հովտին և առանձին ան-
տառին և գործունեայ գիւղին վրայ :
Մինչ հովերը կը սկսէին փչել և շարժել
ծառերը, աստ և անդ լոյսեր կ'երե-
ւէին պատուհաններուն մէջէն, հաս-
կցունելով թէ՛ թէպէտ հովը դուրան
էր ցուրտ և անտանելի, կրնար խա-
ղաղութիւն և երջանկութիւն վայել-
ուիլ բնակարանաց ներսը : Այս ժա-
մուս Մր. Պրատլէ կ'անցնէր այս բլրոց
մէջ գտնուող փոքրիկ գիւղի մը մէ-
ջէն. նա յառաջ քշելով իւր ձին, ու-
րովհետև գիշերն ևս աւելի կը մթնէր,
բռնեց մեծ ճամբան՝ երթալու համար
մօտակայ քաղաքը ուր կ'ուզէր անցու-
նել գիշերը : Մինչ կ'անցնէր գիւղին

վերջին տան քովէն, իրեն թուեցաւ
թէ մէկը կը կանչէր իրեն, բայց կար-
ծելով թէ տղայ մըն էր այն որ կը պո-
ռար ուրիշ աղու մը, շատ կարեւորու-
թիւն չառաւ անոր : Լսեց այն ձայնը
կրկին և կրկին : Ի վերջոյ խորհեցաւ
թէ մէկը թերևս կ'ուզէր խօսել իրեն
հետ, և քաշեց իւր ձիուն սանձը և
նայեցաւ ետ տեսնելու համար թէ
կրնա՞ր արդեօք հասնալ թէ ով էր
կանչողը : «Կեցի՛ր, պարոն, կեցի՛ր»,
ըսաւ փոքրիկ տղայ մը որ իւր բոլոր
կարողութեամբ կը վազէր մարդուն ե-
տևէն՝ անոր համարելու համար : Մր.
Պրատլէ կեցուց իւր ձին, և ահա ութ
կամ տասը տարեկան փոքրիկ տղայ մը
եկաւ հասաւ, հեւալէն իւր շունչը գրե-
թէ բռնուած : «Ի՞նչ կայ, փոքրիկ
բարեկամ», ըսաւ Մր. Պրատլէ : «Սըն-
տուկդ կը կորսնցունես, տէր», պա-
տասխանեց տղան, այն ինչ կարող է-
ղաւ խօսել : «Եւ բոլոր այս ճամբան

վազեցիր այսպէս, այդ ըսելու համար ինձ, ո՞ր է այն, բարի տղայ:”
 “Այո, տէր:” Մը. Պրատէ վար ցատկեց կառքէն, և տեսաւ թէ իւր սընտուկը որ կապուած էր իւր կառքին ներքեւը, մէկ ծայրէն քակուած էր, այնպէս որ եթէ յանկարծ ցնցման մը պատահէր, կրնար բոլորովին քակուիլ և իյնալ կորսուիլ առանց գիտցուելու թէ ո՞ր ինկած էր: “Շատ մեծ մարդասիրութիւն ըրիր, սիրելի զակակ:” ըսաւ մարդը, “կրե՛րով այս բոլոր աշխատութիւնը. ազատեցիր զիս կորսնցունելէ իմ սնաուկս, և շատ շնորհակալ եմ քե՛նէ: Հասակդ կը բաւէ՞ ձին բռնելու մինչև որ սնաուկը կապեմ իւր տեղը,” ըսաւ Մը. Պրատէ: “Ո՛հ, այո, տէր,” ըսաւ տղան, յառաջ քալելով և բռնելով ձիուն սանձէն: Կեցուց ձին մինչև որ Մը. Պրատէ պատրաստ վիճակի մէջ եղաւ ճամբան շարունակելու, և այնուհետև ըսաւ, “Գիշեր բարի, տէր,” և գնաց մէկդի: “Կեցիր քե՛յ մը,” ըսաւ Մը. Պրատէ, շիջին մը համելով իւր գըրպանէն, “տահա քեզի դրամ մը իբրև վարձ աշխատութեանդ, նաև ասով կը յայտնեմ իմ մեծ շնորհակալութիւնս:”
 “Ո՛հ, տէր, շնորհակալ եմ,” ըսաւ տղան, “այուրեքը անկելով մարդուն երեսը: “Այդ կարծե՞ս թէ ստակ պիտի առնում այսպիսի բանի մը համար:”
 “Ա՛հ,” ըսաւ Մը. Պրատէ յետոյ երբ կը պատմէր այս դիպուածը, “տեսայ այս աղին. նայուածքին մէջ թէ տղան կէս մղանէ մինչև երեք քառորդ մղան վազած էր բարիք մը ընելու համար օտարական անձի մը, և այն ալ ոչ թէ վարձ մը յուսալով: Եւ ես կարող չեղայ ստիպել զիս որ ընդունէր ստակը, վասն զի հասկցայ թէ բարիք ըրած լինելու խորհուրդը առելի մեծ վարձք էր անոր համար քան որչափ կրնար ըլլալ ստակը: Ուստի մաղթեցի գիշեր բարի, և նա վազեց դէպ ի ստուն, մինչ ես մտրակեցի ձիս և դարձեալ յառաջ կ’երթայի սրարջաւ. բայց շատ անգամ կը մտածեմ այն ճամբորդութեանս և այն աղնուստիրտ տղին վրայ որ կը բնակէր բլրոց մէջ:”

ՍՈՒՂ ԾԱԽՈՒՄԾ ՀԱՆՃԱՐ

Պարսիկը կը պատմեն իրենց մէկ հոյակապ ինքնակային վրայ որ հաստատեց սովորութիւն մը թէ երբ նա գտնուէր որ և իցէ մարդ մը, այն բաղդատոր անձին տրուէր քսակ մը ոսկի ինքնակային ծառաներէն մէկուն ձեռամբ: Օր մը երբ Շահը (Պարսիկ ինքնակալը) որտարութեան ելած էր, տեսաւ ծերունի մը որ ընկուզի ծառ մը կը անկէր, և յառաջ երթալով դէպ ի նա, հարցուց թէ քանի տարեկան էր: “Ես չորս տարեկան եմ,” պատասխանեց գիւղացին: Երաններէն մին յանդիմանեց ծերունին Շահին առջև այսպիսի անհեթեթ խօսք խօսելուն համար: Դուն յանդիմանի կը յանդիմանես զիս,” ըսաւ գիւղացին, “ես առանց

մտածելու չխօսեցայ, վասն զի իմաստունը հաշուի չեն առնուր ժամանակը որ կորսուած է յիմարութեամբ և աշխարհային հոգեբով: Վասն որոյ իմ իսկական տարիքս կը համարեմ զայն որ անցած է Աստուծոյ ծառայելով և կատարելով առ մարդիկ պարտականութիւններս:”

Շահը հաւնելով այս պատասխանին, ըսաւ, “Գուն չես կրնար յուսալ որ տեսնես այդ անկած ծառերուդ մեծնալ և կատարելութեան հասնելը:” “Ճշմարիտ է,” ըսաւ ծերունին, “բայց քանի որ մենք կ’ուտենք այլոց անկած ծառերուն պատշէները, իրաւունք է որ մենք ալ անկենք ծառեր այլոց օգտին համար:” Այս էր նոր վարդապետութիւն Պարսկաստանի համար, և Շահը երբ լսեց, կոչեց, “Կեցցե՛ս:” Ասոր վրայ ծառաներէն մին նուիրեց ծերունոյն քսակ մը հարիւր ոսկով լի: Գիւղացին երբ առաւ ոսկիները, շատ ծռելով խոնարհութիւն ըրաւ և ըսաւ, “Վեհափառ Տէր, ուրիշ մարդոց ծառերը կատարելութեան կը հասնին քառասուն տարուան մէջ, բայց իմ ծառերս պատու տուին այն ինչ անկուցան:” Այս խօսքին ալ հաւնեցաւ Շահը, և ազաղակեց, լաւ, լաւ: Երբունոյն երկրորդ անգամ տրուեցաւ քսակ մը ոսկի, որ անգամ մըն ալ ծռելով գետին խոնարհութիւն ըրաւ, և ըսաւ, “Ուրիշներու ծառերը տարին միայն անգամ մը պտուղ կու տան, բայց իմ ծառերս երկու անգամ պտուղ տուին մէկ օրուան մէջ:” “Ազնիւ,” գոչեց Շահը, և ասոր վրայ երրորդ քսակ մի ևս տրուեցաւ ծերունոյն: Շահն սկսաւ քե՛յ մը շիտիլ ծերունի գիւղացւոյն այս արագ հարստանալուն պատճառաւ, և մտրակեց իւր ձին հեռանալանկէ, միայն անգամ մը ևս դառնալով անոր սա վերջին խօսքն ըսելու համար, “Մեծարոյ հայր, ես չեմ համարձակիր առելի երկար ժամանակ մնալ հող, որ չըլլայ թէ քու հանճարեղ խօսքերդ հատցունեն իմ գանձս:”

ՀԱՄԱԿՐԱՆՔ ԹՈՉՆՈՅ ՄԵՋ

Պոլիթնէ քանի մը մղոն հեռի, Նիւթրն գեղեցիկ քաղաքին մէջ ազանեաց վտառ մը սովոր էր կերակրուիլ շատ մը հաւուց հետ: Թէ՛ հաւը և թէ՛ ազանիք աղէկ կը վարուէին իրարու հետ, և կը թուէր թէ կը սիրէին իրարու ընկերակցութիւն: Օր մը փորձի գրուեցաւ անոնց բարեկամութեան ինչ աստիճան զօրաւոր լինելը, և բացորոշ հաստատուեցաւ թէ ակարազոյն կողման առջև ինչ արժէք ունէր այն: Կատու մը չարակամութեամբ յանկարծ յատկեց ազանեաց միոյն վրայ մինչ թէ՛ ազանիք և թէ՛ հաւը կերկուտէին ի միասին, և բռնելով զայն իւր բերանը սկսաւ փախչիլ: Իսկոյն

յուզում ելաւ: Երկու աքաղաղք և երկու երեք հաւեր ինկան հասարակաց թնամոյն ետեւէն, և իրենց ձայնով և կոցի կատաղի հարուածներով այնպէս վախցուցին կատուն որ բերնէն վար ձգեց ազանին և փախաւ: Կատուն ետեւէն ինկողները շրջապատեցին ազանին, և յայտնապէս կ’երևէր թէ կ’ուզէին հասնալ թէ մահացու վէրք ընդունած էր արդեօք. բայց ազանոյն վրաս մը չէր եղած, և անոր ոյժը շուտով վրան գալով կրնար թռչիլ, որոյ վրայ աքաղաղք միաբան սկսան իրենց ձայնին բոլոր զօրութեամբ խօսիլ, տօնախմբելու համար իրենց մեծ յաղթանակը: Այս դէպքը շատ յուզեց բոլոր սեսնողները, վասն զի կը ցուցնէր թէ թըռչունք իրենց ընկերաց այնպիսի համակրանք կրնան տածել որ մղուին օգնել իրարու նեղութեան ժամանակ:

ՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՆԵՆՈՒԿԻ

Մարտ ամսոյ հանելուկը լուծեցին նաև Մարտունէ՛ Թարութիւն Կ. Կէտիկեան և Մինաս Կարապետեան:

ՀԱՆԵՆՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

0	*	*	*	*	*	0
*	0	*	*	*	0	*
*	*	0	*	0	*	*
*	*	*	0	*	*	*
*	*	0	0	*	*	*
*	0	*	*	*	0	*
0	*	*	*	*	*	0

1. Ահարնի թոռանց մին, 2. Նաքովրի թոռանց մին ևս ստացական անական մը,
3. Հայրն Չաքարի մարգարէի, 4. Մի քահանայագետ ժամանակակից Դաւթի, 5. Մի արուեստաւոր երաժշտութեան, 6. Մի քաղաք Լիբանանու հովտին մէջ, 7. Քամայ մի որդին:

Երբ այս անունները գտնելով կարգաւ իրարու ներքև շարեւ վերի օրինակին պէս, կ’ունենաս քառակուսի մը որոյ տրաման կիւն գիծերէն մին վերէն վար կարդացուելով կ’ըլլայ հաւատացելոց հօր անունը, եւ միւսը վարէն վեր կարդացուելով կ’ըլլայ փոքր մարգարէից մին:

Կ. Պոլիս 804,054 ՀԱՅՍՏԱՆ

Ամերիկայի Մեխիկոսալոց ընկերութեան կողմէն,
 Արտօնատէր Զ. Ք. ԿԻՐԻՆ
 Տնօրէն—Խմբագիր Զ. Պ. ՊԵՐՉԻՆ
 Ֆինանսները եօզուշու Ա. ՎԵՐԻՆԻՆԻ
 ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
 Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈՒ ՊՅՈՍՅԱՆԻ